



<https://printo.it/pediatric-rheumatology/AM/intro>

Դեղորայքային բուժում

Տարբերակ 2016

2. Ցիկլոսպորին A

2.1 Նկարագրություն

Ցիկլոսպորին A-ն իմունոճնշիչ դեղ է, որ ի սկզբանե օգտագործվում էր՝ կանխարգելու օրգանի "մերժումը", փոխպատվաստման վիրահատություններ տարած հիվանդների մոտ, բայց այժմ նաև օգտագործվում է մանկական ռեմատիկ հիվանդություններում: Այս պրեպարատը հզոր ճնշող ազդեցություն ունի արյան որոշակի սպիտակ բջիջների վրա, որոնք կարևոր դեր են խաղում իմուն պատասխանի առաջացման գործում:

2.2 Դոզան / նշանակման եղանակները

Այն նշանակվում է հեղուկի կամ հաբերի ձևով 3-5 մգ/կգ/օրը երկու անգամ ընդունման:

2.3 Կողմնային ազդեցությունները

Կողմնային ազդեցությունները բավական հաճախ են առաջանում, հատկապես բարձր դոզաների դեպքում. սրանք կարող են նաև բուժումն ընդհատելու պատճառ դառնալ: Դրանցից են՝ երիկամների ախտահարումը, արյան ճնշման բարձրացումը, լյարդի ախտահարումը, լսողության գերաճը, մարմնի մազակալման ուժեղացումը, սրտխառնոցը և փսխումը:

Ցիկլոսպորինով բուժումը պահանջում է կանոնավոր կլինիկական և լաբորատոր հսկողություն՝ դեղամիջոցի կողմնային ազդեցությունները գնահատելու համար: Պետք է կանոնավոր հսկվի արյան ճնշումը երեխաների մոտ:

2.4 Ցուցումները հիմնական մակայան ռևմատիկ հիվանդությունների ժամանակ

Մակրոֆագների Ակտիվացման Համախտանիշ

Յուզենիլ Դերմատոմիոզիտ

Նորանոր դեղեր են ստեղծվում Մանկական Ռևմատոլոգիական Միջազգային Փորձարկումների Կազմակերպության (PRINTO) և Մանկական Ռևմատոլոգիական Համագործակցական Հետազոտական Խմբի (PRCSG at www.prcsg.org) դեղագործական ընկերություններում և կլինիկական հետազոտողների կողմից: PRINTO և PRCSG ներգրավված են պրոտոկոլների, հիվանդության պատմությունների, վերանայման, տվյալների հավաքագրման, տվյալների վերլուծման և բժշկական գրականությունում հաշվետվության մեջ:

Մինչև ձեր բժիշկը իրավունք կունենա նշանակել նոր դեղամիջոց, պետք է մանրամասն ստուգվի դրա անվտանգությունը և հիվանդին բուժելու կարողությունը կլինիկական փորձերով: Սովորաբար դեղի օգտագործումը երեխաների մոտ հաջորդ քայլն է մեծահասակների մոտ դրանց օգտագործումից հետո, հետևաբար որոշ դեղեր կարող են կիրառվել միայն մեծահասակների մոտ: Թուլյատրելի դեղորայքների աճի հետ զուգահեռ նվազում են առանց գրանցման դեղերի օգտագործումը: Դուք կարող եք օգնել նոր դեղերի զարգացմանը՝ մասնակցելով կլինիկական փորձերին:

Ավելի շատ տեղեկատվություն կարող եք գտնել հեռևյալ կայքերում.

PRINTO www.printo.it; <https://www.printo.it/pediatric-rheumatology/>

PRCSG www.prcsg.org

Ընթացքում գտնվող կլինիկական փորձեր

www.clinicaltrialsregister.eu/

www.clinicaltrials.gov

Եվրոպայում երեխաների համար նոր դեղորայքի զարգացման համաձայնեցված պլաններ

www.ema.europa.eu/ema/index.jsp?curl=pages/medicines/landing/pip_search.jsp&mid=WC0b01ac058001d129